

ԷԶՄԻԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (Դրսամիայ հոգեւորականութեան համագումար 1917թ. Յունիս)

1917թ. Փետրուարին ռուսական երկրորդ յեղափոխութեամբ բազմազգ կայրութիւնն անցում կատարեց դէպի հասարակութեան զարգացման ժողովրդավարական ուղին: Ժամանակաւոր կառավարութեան առաջին հրովարտակը մարտի 4-ի «Խղճի եւ ազգային սահմանափակումների վերացման մասին» որոշումն էր: Այն որպէս յեղափոխութեան առաջին ժողովրդավարական ձեռքբերում, վաւրացրեց ճնշուած ազգերի ազատագրումը: Յարիզմի անկումը ջերմօրէն ընդունեց նաեւ հայ ժողովուրդը:

Պետականութիւնից զուրկ հայութեան ձայնը պատմական բեկումնային պահին առաջինը համարձակօրէն հնչեցրեց Հայոց եկեղեցին: Խրիմեանական աւանդները ժառանգուել էին հայ հոգեւորականութեան նոր սերնդի գործիչների կողմից: Փոխուել էին պատմական իրադրութիւնը, հայոց հոգեւոր առաջնորդները, իսկ հայոց հիմնահարցը՝ Արեւմտեան Հայաստանի ազատագրումն ու արեւմտահայութեան ճակատագիրը, դեռեւս չէին վճռուած:

Հայ ժողովրդի պատմութեան այս ժամանակահատուածին եւս բնորոշ է Հայ Առաքելական եկեղեցու միաւորիչ, ազգահաւաք ձայնը, սթափ գործելակերպը:

Մարտի 14-ին յայտնի դարձաւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ի ողջոյնի հեռագիրը ուղղուած ժամանակաւոր կառավարութեան ղեկավար գործիչներին՝ Լվովին, Ռոմեանկոյին, որտեղ նոր կառավարութիւնը դիտուամ էր որպէս փոքրաթիւ ժողովուրդների, այդ թւում եւ հայերի միակ պաշտպան եւ «պատերազմ մինչեւ յաղթական աւարտ» կարգախոսը իրականացնող¹:

¹ ՏԵ՛՛ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց.2, գ. 151, թ. 4:

Մարտի 9-ին ստեղծուած Անդրկովկասեան Յատուկ կոմիտէի (Օզակոմ) ողջունում էին թիֆլիսի հայոց առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը եւ Շամախու հոգեւոր թեմի առաջնորդ Գէորգ սրբազնը։ Շնորհաւորանքների հետ մէկտեղ թէ իշխանութիւնները, թէ եկեղեցին խոստանում էին «հանգստութեան եւ կարգի պահպանում»², մի երեւոյթ ինչը բնորոշ էր յետփետրուարեան կովկասեան իշխանութիւններին, մասնաւորապէս, հայ հասարակական-քաղաքական առաւել ազդեցիկ ուժերին ու եկեղեցուն։

Այդ տրամադրութիւնն էր արտայայտում եւ կովկասեան բանակի հայամէտ վարքագծի տէր զօրավար Կուլեբյակինը. «Զնայած արեւմտահայութեան ողբերգութեանը, (Մէծ եղեռնը - Վ.Ս.) յեղափոխութիւնը հայերի մօտ կրկին արքնացրեց ոռուսների եւ դաշնակիցների օգնութեամբ հայրենիքի ազատագրման յոյսեր։ Զգուշութիւնն արտայայտում էր նրանում, որ հայերն իրենց եռանդն ուղղեցին հանգստութեան պահպանմանը եւ միահամուռ որոշեցին մինչեւ Սահմանադիր ժողովը ոչ մի պահանջ չառաջարկել»³։ Դրանով հայ ազգային-դեմոկրատական ուժերը հետապնդում էին մի գլխաւոր նպատակ՝ սպասել պատերազմի յաղթական աւարտին, որը եւ պէտք է լուծէր Հայկական հարցը։

Մարտի 23-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը նոր ուժերձ յրեց կենտրոնական իշխանութեանը։ «Այժմեան անօրինակ պատերազմի ժամանակ, որ մղում է յանուն մանր ազգութիւնների արդարութեան սկզբունքի եւ որի շնորհիւ տանկական Հայաստանում գտնուող հայութիւնն անօրինակ զոհեր է տուել, նոցա ապագայի եւ հայկական վիլայէթների խնդիրը պէտք է վերջապէս իւր արդարացի, պատմական լուծումը գտնէ, տալով նոցա կատարեալ ազատագրութիւն եւ ինքնուրոյնութիւն։ Եւ մեծայոյս եմ ես, որ վերանորոգուած Ռուսաստանը, Քաջարի դաշնակիցների համաձայնութեամբ կը ստեղծէ նախկին տանկական վիլայէթների վրայ ազատ Հայաստան»⁴։ Փետրուարեան յեղափոխութեան ժամանակաշրջանում (1917թ. մարտ-հոկտեմբեր) ամբողջ երկրում, այդ թւում եւ հայ իրականութեան մէջ, վերելք ապրեց

² Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց.2, գ. 151, թ. 27:

³ Տե՛ս նոյն տեղում ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 22:

⁴ Մաշտոցի անուան Մատենադարան, Կաթողիկոսական Դիւսն, ց. 20, թղթ. 239, վալ. 12:

հասարակական-քաղաքական կեանքը։ Դա ազգային-քաղաքական կեանքի աննախադէպ շքերթ էր, որն արտայայտում էր ժողովրդական ցոյցերի, հանրահաւաքների, համագումարների, ժողովների բազմագանութեամբ ու առատութեամբ։

Այս շարքում իր բացառիկութեամբ մեզ հետաքրքրում է Հայ եկեղեցական համագումարը։

«Հոսանքը շատ է ուժեղ ու յախուռն, որ նրանից ազատ մնայ հայ եկեղեցականը», գրում էր էջմիածնի Գիւտ վարդապետն ու միաժամանակ մտավախութիւն յայտնում, թէ «ոռուսահայր առայժմ կարծես իր կողմից դարերով պաշտած ու նրա հովանու տակ նեղութեան բռպէին ապաստան գտած եկեղեցուն մոռացել է, եկեղեցու բարենորոգութեան հարցը հրատապ խնդիրների շարքում չի դնում»։ Նա արձանագրում էր նաեւ այն հանգամանքը, որ եթէ մի կողմից կայ անտարբերութիւն, միւս կողմից էլ, յատկապէս, հոգեւոր դասի մէջ, սկսած դպրից մինչեւ եպիսկոպոսը, կայ հայ եկեղեցու բարեկարգութեան նկատմամբ մտքերի ցաւալի շփոթութիւն⁵։ Հարկ է նշել, որ յեղափոխութեան ընձեռած ու երկար սպասուած ազատութիւնների հետ մէկտեղ հայ բարձր աստիճան հոգեւորականութեան մեծամասնութիւնը մտահոգում էին բազմաթիւ ու բազմաբնոյթ չլուծուած եւ թերի խնդիրներ։ Համագույն ոգեւորութիւնը, միաժամանակ, հիմնաւորուած տագնապ ու գգուշութիւնը էին հաղորդում։

Առաջնահերթ էր դառնում նախ այն, որ ազգային, հասարակական-քաղաքական կեանքի հզօր վերելքը ինչ-որ տեղ թուլացնում էր եկեղեցու եւ հոգեւոր դասի դերը, նրանից խլելով առաջին հերթին հասարակական, ինչու չէ, նաեւ քաղաքական յնարանը։ Տագնապ էին առաջացնում յեղափոխութեամբ աշխուժացած ձախուժերի կողմից «անկրօնութիւն, անազգութիւն» գաղափարները։

Այլ խօսքով, կրկին անգամ ասպարէզ էր գալիս հայ եկեղեցու պահպանողականութիւնը, իր դրական ազգային ուղղուածու-

⁵ Տե՛ս աւելի հանգամանալից՝ ՄԵԼԻՔԵԱՆ Վ., Փետրուարեան յեղափոխութիւնը եւ Հայաստանը, Երեւան, 1997, նոյնի՝ Հայ եկեղեցին եւ արեւմտահայութեան խնդիրները Փետրուարեան յեղափոխութեան ժամանակաշրջանում, էջմիածին, Ապրիլ, 1996։

⁶ Տե՛ս Արարատ, էջմիածին, 1917, Յունիս-Թուլիս, էջ 483։

թեամբ: Դարակազմիկ ցնցումների փուլում, այն առաւել քան երբեք, առաջնային էր դարձնում ազգային դիմապատկերի պահպանումը, այն էլ հայկական ցեղասպանութիւնից յետոյ:

Մի կողմից ողջունելով ցարիզմի անկումը, միւս կողմից հոգեւրական դասը զգուշանում էր, որ թէեւ ատելի, բայց ամուր բիւրոկրատական վարչակարգի կործանումը կարող է խարխլել նաեւ եկեղեցու դիրքը ուսւահայ իրականութեան մէջ:

Տուեալ դէպքում ընդհանուր տագնապի արտայայտիչն էջմիածնական Գիւտ վարդապետն է, որը 1917թ. Ապրիլ-Յուլիս ամիսների ընթացքում, «Արարատ» ամսագրում հանդէս է գալիս յօդուածաշարով՝ Դրանց ուղղուածութիւնը կարելի է դասակարգել եւ քննարկել երկու՝ 1. յեղափոխութիւն (ցարիզմի անկում) եւ եկեղեցի յարաբերութեան եւ 2. եկեղեցու բարեկարգման իրաւասութեան եւ հրատապութեան տեսանկիւնից: «Քառ մտքեր կան ինչպէս հոգեւորական դասի, նոյնպէս եւ աշխարհականների մէջ: Օրէցօր այդ քառը ոչ թէ պակասում, այլ աւելանում է, իսկ դրա հետեւանքը հայ եկեղեցու համար օգտակար չէ, - գրում էր նա եւ աւելացնում, - չտարուենք մոմենտով, չկարծեն, թէ հայ մարդու համար եւս ենշտ է ասել, թէ կրօնը խնդի անհատական գործ է ու թող ամէն ոք իր հասկացողութեամբ վեռէ»⁷: Ակնյայտ է կրօնական կարգապահութեան, ամրապնդման կոչը: Առաջադրուած խնդրի առաջին՝ արտաքին ազդակը յեղափոխութեան ներգործութիւնը, թերեւս պարզ է: Աւելի հանգամանօրէն անդրադառնանք նոր իրավիճակում եկեղեցու բարեկարգման հարցին, որի լուծմանն էր հիմնականում ուղղուած եկեղեցական համագումարի նախապատրաստումը:

Եկեղեցու բարեկարգման հարցն ինչ որ տեղ տարերայնորէն է հրապարակ հանւում եւ ակամայից անհանգստութիւն է առաջացնում, այն առումով, որ «ամէն ոք ազատ է խօսելու այդմասին, բայց մինչեւ խօսելը պէտք է հարցը լրջօրէն ուսումնասիրել, նախ որոշել ժողովրդի առաջադիմութեան խնդրի եռուստիւմ»:

* «Կրօնական նգնաժամը», «Հայ եկեղեցու բարեկարգման խնդիրը», «Եկեղեցական-ազգային ժողով», «Գրախօսական նախագծի կանոնադրութեան ազգային-եկեղեցական Սահմանադրութեան» եւ այլն:

⁷ Տե՛ս Արարատ, Յունիս-Յուլիս, էջ 487:

թիւնը»⁸: Խօսքը վերաբերում էր հայ բնակչութեան կրօնական-հոգեւոր գիտակցութեան աճին եւ ինչպէս 1917թ. իրականութեան մէջ, նաև մեր օրերում այս հարցը մեզ՝ հայերիս առանձնացրել է դարեր ի վեր: Հարկ ենք համարում մէջ բերել «կրօնական նգնաժամը» յօդուածից մի հասուած, որը մեր կարծիքով այս հարցադրման համապարփակ բնութագիրն է: «Պէտք է պարզապէս ասենք, որ մեր ժողովուրդը կրօնական չէ. նա իր եկեղեցին սիրում է, պաշտպանում է, արիւն է քահում նրա համար եւ ամէն նեղութիւններ յանձն առնում, նուիրաբերութիւններ անում, բայց ոչ յիրափի կրօնական մաքուր, ներքին ըմբռումից դրդուած, այլ աւելի շուտ ազգային ոգով տարուած: Մեր եկեղեցու ազգային-հասարակական բնոյքը կլանել է նրա կրօնական մասը եւ ժողովուրդը եկեղեցում ամէնից առաջ փնտուել է ազգային-հասարակականը եւ վերջին դարերում երբեք կրօնականը»⁹:

1836. ոռուական «Պոլոժենիա»-ից (Հայ Առաքելական եկեղեցուն նորիրուած ցարական օրէնք-Վ.Մ.) յետոյ, երբ հարկ եղաւ վերանայելու հայ եկեղեցու եւ ոռուական պետութեան փոխարաբերութիւնները կարգաւորող սկզբունքային խնդիրները, 1906 թուականին հրաւիրուեց ազգային համագումար: Ուշադրաւ է, որ այն կեանքի էր կոչուել դարձեալ ոռուական յեղափոխութեամբ, տարբերութեամբ, որ պահպանում էր ցարիզմը: Երբ ցարիզմը իրականացնում էր հայահալած քաղաքականութիւն՝ լինէր դա գոլիցինեան բացայաց, թէ վորոնցով-դաշկովեան քօղալկուած տարբերակներով, էջմիածնի առջեւ բարձրանում էր հայկական եկեղեցական ու դրանով իսկ ազգային կառոյցի պահպանման հրամայականը: Այլ կերպ ասած 1600 տարի աշխատող եւ պայքարող կառոյցը հնարաւորութիւն չունէր զբաղուելու ազգային կեանքի առաջադիմութեան, կրօնաբարոյական կեանքի կանոնաւորման հարցերով: Այժմ, այդ հնարաւորութիւնը արուել էր. նոր Ռուսաստանը հռչակելով դեմոկրատական ազատութիւններ, այլեւս չէր փակելու հայկական դպրոցները, չէր բռնագրաւելու եկեղեցական ունեցուածքը, չէր պարտադրելու ոռուսերէն երդում տալ:

⁸ Տե՛ս Արարատ, 1917, Ապրիլ-Մայիս, էջ 339:

⁹ Տե՛ս նոյն տեղում, Օգոստոս, էջ 630:

Բայց դրա հետ մէկտեղ հոգեւոր այրերի կարծիքով հէնց իրենց դասը միշտ չէ, որ իր կոչման բարձրութեան վրայ է եղել, «ունեցել է եւ ունի քահանայական հին ցաւը. այստեղ է, որ պէտք է փնտոել եւ առանց թագանելու հրապարակ հանել հայ եկեղեցու վիրաւոր կողմը։ Այսօր այլեւս կիսատ խօսելը վտանգաւոր է։ Ցաւը լիովին պիտի հրատապ գայ, որ համապատասխան սպեղանի պատրաստուի»¹⁰։

Ուշագրաւ ու միաժամանակ ցաւալի է հնչում այն դիտողութիւնը, թէ հայ հոգեւորականը ամէնից շատ ուզում է հասարակական գործիչ լինել, ուզում է գործնական գիտելիքներ տարածել, «բայց նրա բերանից չես լսում Փրկչի վարդապետութեան քարոզը անվախ տարածելու պահանջը»¹¹։

Հայաստանեայց Առաքելական եկեղեցու գլխաւոր առանձնայատկութիւնն այն է, որ իր գործունէութեան մէջ նախ եւ առաջ իրականացրել է ժողովրդական կառավարութեան սկզբունքներ, ինչպէս օրինակ, կաթողիկոսի, քահանաների ընտրութիւնը, հոգաբարձութիւններ, թեմական խորհուրդներ, ազգային-եկեղեցական ժողովներ հրաւիրելը։ Մեր եկեղեցին մեծաւ մասսամբ ազգային, հասարակական-քաղաքական երեւոյթներին համահունչ, երբեմն էլ առաջատար է եղել։ Նա չի կտրուել ազգային-աշխարհիկ կեանքից, չի ստեղծել միայն ներփակ շահերին հետեւող դաս, առաւելապէս ժողովրդի ազգային գիտակցութեամբ ու նրա հսկողութեամբ է գոյատեւել։ Այստեղից եւս բխում է, որ մինչ 1917թ. եկեղեցու առջեւ արդէն հասունացած խնդիրները նոր քաղաքական, ազգամիջեան յարաբերութիւնների պայմաններում, թելադրում են եկեղեցու բարեկարգման խնդիրը։ «Մասնաւոր պահանջները կ'իրականանան, լուծում կը ստանան այն ժամանակ, երբ իրաւակարգը ամրապնդենք, անխուսափելի դարձնենք»¹²։ Գիւտ վարդապետը իր այս եզրայանդումով հէնց ապացուցում է, որ հայ հոգեւորականը լայն մտահորիզոն ունինալուց բացի պէտք է լինի նախ եւ առաջ ազգային գործիչ եւ անուշադրութեան չմատնի երբեք ազգային ազատ գոյութեան ու զարգացման հարցերը, կարողանայ դրանք տեսնել ու լուծել առաւել

¹⁰ ՏԵ՛ս Արարատ, 1917, Յունիս-Յուլիս, էջ 484։

¹¹ ՏԵ՛ս Արարատ էջ 485։

¹² ՏԵ՛ս նոյն տեղում, Ապրիլ-Մայիս, էջ 335։

մեծ հասարակական երեւոյթների ամբողջութեան մէջ: Իսկ համազգային խնդիրները, մասնաւորապէս, փոթորկայոյզ 1917 թուականին, բազմաթիւ էին եւ բարդ եւ որ ամենակարեւորն է, դրանց գգալի մասը կապուած էին եկեղեցու հետ:

Հայ ժողովրդի գգալի մասը 1917 թուականի սկզբին կամ գաղթականի կամ էլ աքսորեալի կարգավիճակում էր, Հայաստանի գերակշիռ մասը կամ պատերազմական թատերաբեմ էր, կամ էլ հարեւան երեք պետութիւնների տարածք եւ այն էլ այնպիսի միջազգային իրավիճակում, երբ այդ պետութիւնների, մասնաւորապէս, Ռուսաստանի եւ Թուրքիայի ապագայ իրաւակարգն անգամ որոշակի չէր: Ժողովրդի մի ստուար մասն էլ ապրում էր գաղթօջախներում:

Այս իրավիճակում բարձրանում էր համազգային եկեղեցական համագումարի հրաւիրման խնդիրը, մանաւանդ, եթէ ելակէտ էր ընդունում, հայ եկեղեցին որպէս համազգային կառոյց դիտելը: Պէտք է ասել, որ էջմիածնում համագումարի իրաւասութեան հարցը լուրջ վիճաբանութիւնների տեղիք էր տալիս, ինչը դրսեւորուեց թէ համագումարի աշխատանքի ընթացքում, եւ թէ ընդունած բանաձեւերում: Հանգուցակէտը՝ եկեղեցական խորհրդաժողովին ազգային համագումարի կամ թէ միայն ռուսահայերի եկեղեցական ժողովի կարգավիճակ չնորհելու մէջ էր: Միեւնոյն ժամանակ ռուսական «Պոլոժենիէ»-ի, արեւմտահայերի Ազգային Սահմանադրութեան, Կ. Պոլսի, Երուսաղէմի պատրիարքութիւնների, Կիլիկիայի կաթողիկոսութեան եւ այդ վայրերում ազգային սեփականութեան, դպրոցների, հիմնարկութիւնների գոյութիւնն ու դրանց հետ կապուած հարցերի քննարկումը ինքնին ձեռք էր բերում, իսկ ժողովին էլ տալիս էր համազգային քննոյթ: Կարեւոր էր նաեւ այն, որ հայոց հայրապետութիւնը, կաթողիկոսները գործել են Եւրոպայում եւ Ռուսաստանում շարունակում էին հանդէս գալ որպէս միջազգային բանակցային գործընթացի մասնակից:

Այս ամէնին աւելանում էին նաեւ հայ եկեղեցու անցեալի, եկեղեցական իրաւական կարգավիճակի, կառուցուածքի, կրօնա-բարոյական, տնտեսական, ծխական հարցեր, որոնք եւս պահանջում էին եկեղեցական համագումարի հրաւիրում:

Էջմիածնում բուռն քննարկումների, դրա հետեւանքով տեսակէտների բախման մասին է վկայում վերը նշուած հոգեւորական գործչի 1917թ. գրախօսութիւնը՝ ուղղուած Մատթէոս Եպիսկոպոսի հեղինակութեամբ այդ շրջանում գրուած «Նախագիծ կանոնադրութեան»¹³:

Հայեցքների յաճախ անզիջում բնոյթը բխում էր դարձեալ յեղափոխութեան կայացման փուլում ազգային ու եկեղեցական արմատական հիմնահարցերի բարձրացման նպատակայալրմարութեան սկզբունքից: Այդ գործելակերպն էին որդեգրել նաեւ հայ ազգային-դեմոկրատական կուսակցութիւնները, երբ նախատեսուած Հայոց ազգային խորհրդակցութիւնը (Արեւելահայերի համագումար) հրաւիրուեց միայն 1917թ. սեպտեմբերի վերջին: Վերոյիշեալ նախագծին տրուել էր «Սահմանադրութիւն» անուանումը: Պատճառն այն է, որ կանոնադրութիւնը կազմուել էր Արեւմտահայերի ազգային Սահմանադրութեան հիման վրայ: Լաւագոյն օրինակը Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքի իրաւական նոյնացումն էր, երբ, ասենք, կաթողիկոսը կարող էր ամբաստանուել եւ այլն: Այլ խօսքով հոգեւոր առաջնորդը վերածում էր սովորական քաղաքացու, պետական ժառայողի, ինչը ժամանակին փորձում էր իրականացնել Ստոլիպինը: Տարածայնութեան սուր կողմ էր դառնում նաեւ այն, որ «Սահմանադրութեան» հիմքում դրում էր ազգը կամ եկեղեցին ամրագրելու սկզբունքը: Գործնական տեսակէտից նպատակին չէր ծառայելու նաեւ նախատեսուող Գերագոյն խորհուրդը, այն պատճառուիլ, որ դրա անդամները պէտք է լինէին միայն «ոռուսահայեր»: Հարկ է նշել այստեղ, որ յեղափոխութեան ընթացքում հայ հասարակութիւնն առաւել քան երբեք երկիրեղիուեց «ոռուսահայ» եւ «քուրքահայ» բեեւուների, որը կրելով անցեալի բեռը ոչ պակաս ծանը հետեւանքներ ունեցաւ 1917-1920թ.թ.: Ցաւօք, եկեղեցին եւս չէր ձերբագասուել այդ արատաւոր երեւոյթի դրաեւորումներից:

Մեր նպատակը, ի հարկէ, եկեղեցական պաշտօնեաների վէճի քննարկումը չէ, այլ համագումարի նախօրէին այդ բանավէճում դրսեւորող եկեղեցուն յուզող խնդիրների պարզաբանումը: Աւելացնենք միայն, որ եկեղեցական սահմանադրութեան խնդրին

¹³ Արարատ, 1917, Ապրիլ-Մայիս, էջ 370-387:

են անդրադարձել նաեւ Մատթէոս Եպիսկոպոսը, Արսէն Ղլտճեանը (Ալեքսանդրապոլ 1906թ.): Վերջինս այն անուանել է «Նախագիծ Հայաստանեայց եկեղեցու Սահմանադրութեան»: Հեղինակը կարողացել է համազրել հայ եկեղեցու անցեալը, կանոնները եւ, որ ամենակարեւոր է, ելակէտ է ընդունել տուեալ պատմական պահը¹⁴ (1905-1907թ.թ. յեղափոխութիւնը-Վ.Մ.):

Անհրաժեշտութիւն էր դառնում պարզել նախ եւ առաջ եկեղեցու ազգային-վարչական-քաղաքական կազմակերպութեան սահմանադրական, միապետական, հանրապետական թեմերի կենտրոնացման, կամ թէ ապակենտրոնացման հիմքը եւ այն առաքելական եկեղեցու կանոններով, սովորութիւններով ու պատմական աւանդոյթներով հիմնաւորելը:

1917թ. Ապրիլի 7-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Են առաջին անգամ իր թ, 678 կոնդակում յիշատակում է եկեղեցական ազգային ժողովի մասին¹⁵: Հայաստանեայց Առաքելական եկեղեցու կանոնական իրաւունքով եկեղեցու բարձրագոյն իրաւասու մարմինը, ինչպէս գիտենք, եկեղեցական ազգային ընդհանուր ժողովն է: Յարական վարչակարգի քաղաքականութեան պատճառով այդ ժողովների իրաւասութիւնը խստօրէն կրծատուել էր, թողնուել էր միայն կաթողիկոսի ընտրութիւնը:

Այսպիսով էջմիածնի եկեղեցական համագումարի նախապատրաստական փուլում տարածայնութիւնների հանգուցակէտը վերաբերում էր Հետեւեալին, այն է՝ եկեղեցու բարեկարգման՝ կրօնական, վարչական ու նաեւ ազգային ծանրակշիռ հիմնահարցերի լուծումը պատկանում է.

ա) ազգային եկեղեցական, բ) արեւելահայ եկեղեցական-ազգային, գ) արեւելահայութեան հոգեւորականութեան ժողովներին:

«Եկեղեցական-ազգային ժողով» յօդուածում, որը հրապարակուեց յուլիսին, այսինքն՝ համագումարի աւարտից յետոյ, Գիւտ վարդապետը այն որակում է որպէս «ոռուսահայ կուսակրօն եւ աշխարհիկ հոգեւորականների նախապատրաստական ժողով»¹⁶:

¹⁴ Արարատ, 1917, Ապրիլ-Մայիս, էջ 373:

¹⁵ Արարատ, 1917, Յունիս-Յուլիս, էջ 487:

¹⁶ Տե՛ս նոյն տեղում:

Հետաքրքիր է, որ հեղինակը նոյնատիպ բնոյթ ու իրաւասութիւն էր վերագրում նաեւ արեւելահայերի օգոստոսի 20-ին գումարուելիք ազգային ժողովին, իսկ եկեղեցական ազգային ժողովի գումարումը նա ոչ միայն անհրաժեշտ, այլեւ հնարաւոր էր համարում մօտ ապագայում¹⁷: Հարցադրումը, ի հարկէ, հիմքեր ունի, բայց միեւնոյն ժամանակ առկայ է ոռւսական եւ կովկասեան քաղաքական անցուդարձի, մասնաւորապէս, հայ իրականութեան առջեւ ծառացած արմատական խնդիրների ոչ բաւարար դիտակցումը: Դրանք էին Հայկական հարցը, գաղթականութեան, ուազմաճակատը սեփական ուժերով պաշտպանելու, կովկասի ազգային խնդիրները եւ այլն: Մեր կարծիքով, նման իրավիճակում, երբ օրերն ու ժամերն անգամ շտկումներ էին կատարում ոչ միայն ոռւսական, այլեւ համաշխարհային ռազմա-քաղաքական անցուդարձում դէպքերի ետեւեց գնալը, սպասելը միշտ չէ, որ դրական արդիւնք էր ունենալու եւ հէնց այս պարագայում է, որ անհրաժեշտ էր ժամանակի հետ ընթանալ:

Այդ նպատակն էր հետապնդում Յունիսի 8-ին կաթողիկոսութեան նախաձեռնութիւնը՝ «Տանկահայատանի տեղահանուած վայրերի Հայոց Միութեան» ստեղծումը: Վերջինիս կանոնադրութեան մէջ շեշտուում էր միութեան ազգային բնոյթը, որը չէր յարելու ոչ մի քաղաքական հոսանքի: «Հայոց Միութիւնը» նպատակ էր դրել ա) վերականգնել տեղահանուած վայրերի հայ փախստականներին վերապահուած իրաւունքները, բ) հոգ տանել նրանց տնտեսական ու բարոյական կացութեան մասին, գ) յարգել տալ տեղահանուած վայրերի հայ փախստականների հաւաքական ձայնի ուժը այս կամ այն հաստատութիւնների առաջ, դ) միացնել զանազան քաղաքներում կազմակերպուած Հայրենակցական միութիւնները եւ ստեղծել կենտրոնական մարմին, ե) օգնել Միջագետքի հայ տարագիրներին եւ գերութեան մէջ գտնուող հայերին, զ) նպաստել հայրենիքի վերայիշման դորժին: Միութիւնը ղեկավարում էին կ. Լուսիննեանը եւ Ա. Սարգսեանը¹⁸: Ամենայն Հայոց կաթողիկոսը Արեւելեան Հայաստանի վիճակը համարում էր համեմատաբար կայուն եւ ապահով, որոշ առումով նաեւ լուսած, ուստի եւ Ռուսաստանի ուշադրութիւնը սեւեռում իր Ա-

¹⁷ Տէ՛ս նոյն տեղում:

¹⁸ Տէ՛ս Մատենադարան, նոյն տեղում, վաւ. թ. 20:

րեւմտեան Հայաստանի վրայ. Այդ է վկայում եւ Միութեան ստեղծումը:

Էջմիածնի Եկեղեցական Համագումարը կայացաւ Յունիսի 12-23-ը¹⁹: Բանաձեւերն ամփոփող գրքոյնի վրայ (լոյս է տեսել 1917թ. - Վ.Մ.): Կարդում ենք «Ռուսահայ հոգեւորականութեան համագումար»²⁰:

Հայ Եկեղեցու պատմութեան մէջ սա առաջին դէպքն է, երբ Եկեղեցական Համագումարը հրաւիրում էր որպէս արդիւմք արմատական քաղաքական տեղաշարժերի՝ տուեալ դէպքում յեղափոխութեան ու միապետութեան տապալման (1996թ. ցարիզմը պահպանում էր - Վ.Մ.): «Վան-Տոսպ»-ի արտայայտութեամբ «դարերից ի վեր կաշկանդուած հայ եկեղեցին հնարաւորութիւն ունեցաւ ամենայն ազատութեամբ հրապարակ հանել իր ցաւերը, ցանկութիւնները»²¹:

Էջմիածնի Համագումարին ներկայ էին 29 կուսակրօն եւ 38 աշխարհիկ (ամուսնացեալ) հոգեւորական, ընդամէնը 67 հոգի:

Հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ տէրունական աղօթքով, «Եջմիածինն ի Զօրէ» շարականով, Համագումարին ուղղուած Հայրապետական ու կոնդակի ընթերցմամբ եւ Տեղակալ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի (Զոհրաբեան) ողջոյնի խօսքով: Ուշագրաւ է, որ Համագումարը ողջունում էին Կովկասեան բանակի հայ զինուորները: Պատուաւոր նախագահ ընտրուեց Տ. Տեղակալը, որպէս Նորին Վեհափառութեան ներկայացուցիչ: Յունիսի 13-ի նիստում Համագումարը ձեւաւորուեց իր աշխատանքային բաժանմունքները. 1. Եկեղեցու եւ Եկեղեցականութեան բարենորոգման, 2. տնտեսական, 3. դպրոցական-կալուածական, 4. վարչական, 5. ոռուահայ եկեղեցական կենաքի այժմէական խնդիրներ: Եղաւ առաջարկ՝ որոշելու Համագումարի վճիռների իրաւական նշանակութեան խնդիրը եւ, ինչպէս սպասւում էր, նախապատրաստական փուլում ձեւաւորուեցին երկու հոսանքներ, ա-

¹⁹ Տե՛ս ՀՀՊԿԱ, ֆ. 57, ց. 2, ֆ. 482, թ. 1:

²⁰ Տե՛ս Ռուսահայ հոգեւորականութեան Համագումարի (1917թ. Յունիս) բանաձեւեր, Ս. Էջմիածին, 1917, այսուհետեւ՝ Բանաձեւեր:

²¹ Տե՛ս Վան-Տոսպ, Թիֆլիս, 1917, 2 Յուլիսի:

ուաջինը՝ որոշումներին խորհրդակցական, իսկ երկրորդը՝ օրէնսդիր (պարտադիր) կարգավիճակ տալու կողմնակիցներն էին:

Քանի որ համագումարը հրաւիրող կոնդակը վերջինիս «նախապատրաստական» անուն էր տալիս, ուստի եւ «պարտադիր» եւ «օրէնսդրական» համարելու առաջարկ անողները չնախատեսուած ճանապարհ էին ցոյց տալիս: Ընդհանուր առմամբ քննարկուեցին 6 բանաձեւեր, առաւելագոյն ճայներ (22 ճայն) ստացաւ եւ ընդունուեց 4ետեւեալ բանաձեւեր. «Նկատի ունենալով, որ ներկայ ժողովը որքան եւ նա հրաւիրուած լինի անկատար ճեւով, որքան եւ անսխատեմ լինի թեմերի վրայ մանդատների (յանձնարարագիր) բաշխումը եւ պատգամաւոր ժահանաների բունընտրութիւնը, 2. որ այս ժողովում ներկայ են ոչ միայն էջմիածնում գտնուող միարանները, այլ նաև մեր բոլոր թեմական առաջնորդները, 3. որ պատմական անցեալում մեր եկեղեցական-ազգային ժողովներին մասնակցել են էջմիածնի միարանները եւ այն ժահանաները, որոնք հմարաւորութիւն են ունեցել գալ ժողովի, 4. որ ժողովի պատգամաւորական կազմը իրը հետեւանք անսխատեմ գործեղակերպի ոչնչով մեղաւոր չէ, որ ինքը փոքր բուով է մասնակցում այս ժողովին, ուստի եւ նըկատի առնելով, որ Յունիսի 12-ի 1917թ. հայ կուսակրօն եւ աշխարհիկ հոգեւորականութեան համագումարը կազմուած է զուտ հոգեւորական դասից, մի երեւյթ, որ մեր ազգային պատմութեան ընթացքում տեղի չի ունեցած երբեք, որ հայաստանութեայց եկեղեցու տէրը եւ տնօրէնը ինքը հայ ազգն է», ամբողջ հայ ժողովուրդը, որ այս ժողովում բացի նրանից, որ Ռուսահայ հայ ժողովուրդը իսկ չկան հոգեւորական ներկայացուցիչներ, որոշ հատուածներից իսկ չկան հոգեւորական ներկայացուցիչներ, այս ժողովը օմերիկայի եւ այլ հոգեւոր ներկայացուցիչները՝ այս ժողովը օմերիկայի լինել չի կարող, այլ միմիայն խորհրդակցական է կամ ընադիր լինել չի կարող, այլ միմիայն խորհրդակցական է կամ նախապատրաստական, որի որոշումները եւ վճիռները Հայոց եկեղեցու համար պարտադիր լինել չեն կարող, այլ որպէս ցանկեղեցու համար առաջարկուել է ի տնօրինութիւն ապագայ ազգային-եկեղեցական ժողովուն²²:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին ու նրա համագումարը (9-րդ 19-ը Յունիսի) ողջունեցին Փետրուարեան յեղափո-

²² Բանաձեւեր..., էջ 5-8:

խութիւնը որպէս «յօգուտ ազգային շահերի, երկրի բարեկեցութեան ու բոլոր ազգերի ազատ զարգացմանն ուղղուած յեղաջրում»²³: Ցանկութիւն յայտնուեց նաեւ, որ իւրաքանչիւր հոգեւորական, իւրեւ հայ անհաս մասնակցութիւն ունենայ քաղաքական եւ քաղաքացիական խնդիրների մէջ: Ասուածի անմիջական շարունակութիւնը (Յունիսի 20-ին, 10-րդ նիստ) արեւելահայ համագումարի (Հայոց ազգային համագումարը) եւ Սահմանադիր ժողովի նկատմամբ հայ եկեղեցու վերաբերմունքի քննարկումն էր: Այն ընթացաւ իրենց հարցադրումներով բաւական սուր չորս բանաձեւերի շուրջը եւ, հիմնականում, ամփոփեց առպագայ ուուսահայ ազգային ժողովում եկեղեցու, կաթողիկոսի եւ հոգեւորականների մասնակցութեան եւ դրա չափի խնդիրը: Բոլորն էլ այն համոզմունքն էին յայտնում, որ եկեղեցին պէտք է անպայման մասնակցի համագումարին: Առաւել արմատական էր առաջին բանաձեւը: Այն արտացոլում էր նաեւ կովկասահայ քաղաքական, միջկուսակցական պայքարը: Այնտեղ ասում էր. «Նվատի ունենալով, որ մինչ այսօր ազգային-քաղաքական գործերում ազգի ներկայացուցիչը եւ տէրը համարուել է Ամենայն Հայոց Կարողիկոսը, որն եւ միայն իրաւատէր էր Ռուսահայ ազգային ժողով գումարելու, գտնում ենի, որ ինքնակոչ միջկուսակցական մարմինը ուզուրպացիայի է ենթարկել Վեհափառ Կարողիկոսի իրաւունքը, որի դեմ բողոքելով առաջարկում ենի, որպէսզի կարողիկոսը եւ եկեղեցական ներկայ ժողովը գումարուելիք համագումարին ունենան այնքան բուռվ ներկայացուցիչներ որքան կը կամենան»²⁴:

Այս բանաձեւումը նախ, դրաեւորուում է յեղափոխութիւնից յետոյ, յատկապէս, եկեղեցու եւ կուսակցութիւնների միջեւ եղած յարաբերութիւնների սրումը: Խնդիրը նրանում է, որ ժողովրդավարական յեղափոխութեան յաղթանակով ընդյատակից դուրս եկած հայ ազգային կուսակցութիւններն առարկայականօրէն, յանկարծ իրենց գրացին իրավիճակի տէրը՝ հայ ազգային, հասարակական-քաղաքական գրեթէ բոլոր խնդիրների եւ, յատկապէս, Հայկական հարցի լուծման բնագաւառում: Դա բխում էր հէնց յեղափոխութեան բնոյթից, որը հոչակում էր ազգերի ազատ զար-

²³ ՏԵ՛՛ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 482, թ. 1:

²⁴ Բանաձեւեր..., էջ 22:

գացումը, այլ խօսքով՝ յեղափոխութեան կայունացումը ի վերջոյ յանգեցնելու էր ազգերի ինքնորոշման սկզբունքի յաղթանակին, հասկանալի է, տեսականօրէն պետութեան ձեւաւրմանը։ Այլ խօսքով, հասարակական-քաղաքական եւ ազգային կեանքի զարթօնքը յանգեցնում էր նրան, որ առայժմ անտեսում էին եկեղեցին եւ նրա դերը համազգային հիմնահարցերի բարձրացման ու լուծման ասպարէզում։ Հայոց պետականութեան անկումից յետոյ կրկին դրսեւում էր եկեղեցի-քաղաքական-աշխարհիկ մարմիններ հասկացութիւնը։

Ինչ վերաբերում է միջկուսակցական մարմնին, ապա հարկ է նշել, որ այն իր նիստերը գումարում էր դեռ 1916թ.-ից սկսած եւ նպատակ ունէր հասնել հայ քաղաքական կուսակցութիւնների միաւորմանը, ինպէս նաեւ ՀՅԴ կողմից զեկավարուող Ազգային բիւրոն փոխարիննել համազգային եւ բազմակուսակցական մարմնով։ Ստացւում է, որ համարումարի բանաձեւում յիշատակուող «ինքնակոչ միջկուսակցական մարմինը», որը իւրում էր կաթողիկոսի իրաւունքը, իր հերթին տեսականօրէն ենթարկւում էր հայ իրականութեան մէջ ամենաազդեցիկ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մենատիրութեան հաստատմանը։ Մէկ անգամ եւս դրսեւում էր Հայ եկեղեցու եւ ազգային կուսակցութիւնների կարծիքների բաժանումը Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցում։ Յայտնի է, որ Հայաստանեաց եկեղեցին եւ հոգեւորականութիւնը շուրջ մէկ դար հալածուելով ցարական վարչակարգի կողմից, կուլ տալով մեծապեսականութեան ու հակահայկականութեան դրսեւորումները, արեւմտահայութեան ազատագրութեան հարցը իրաւամբ կապում էին Արեւմտեան Հայաստանում Ռուսաստանի նուաճումների հետ։ Հայ եկեղեցին վարում էր իրատես, կշռադատուած քաղաքականութիւն, գտնելով, որ վարչակարգերի փոփոխումը ամենեւին էլ չի նշանակում հրաժարում դարաւոր ռազմաքաղաքական դաշնակցից։

Այս նոյն երեւոյթը հայ ազգային կուսակցութիւնների մօտ ունէր վայրիվերումների բնոյթ եւ յաճախ ցարիզմի հանդէպ, իսկ աւելի ուշ խորհրդային կարգերի նկատմամբ ունեցած ատելութիւնը արտայայտում էր անսքող ու վերջնական առճակատման ձեւով։ Կարելի է ասել, որ չնայած երկու կողմերի հակաիշխանական, բայց ոչ երբեք հակառական պայքարին, Ռուսաստանի նկատմամբ տարուող քաղաքականութիւնն արտայայտում էր

տարբեր եղանակներով, ինչն էլ, մեր կարծիքով, խորացնում էր այս հակասութիւնը: Այս բախման մէջ նկատելի է նաեւ զօրավար Անդրանիկի՝ դէպի էջմիածինն ունեցած ջերմ վերաբերմունքը: Յանձին այդ հեռատես համագործակցութեան, որը ձեւաւորուել էր հայ ազատադրական շարժման, Հայկական հարցի, գաղթականութեան խնդիրների ու հետեւողական ոռուսական կողմնորոշման շուրջը, յեղափոխութեան ընթացքում աւելի խորացան ազգային կուսակցութիւնների, մասնաւորապէս, ՀՅԴ, ՀԺԿ եւ Անդրանիկի ու նրա հոսանքի հակասութիւնները: Յայտնի է, որ դրանք իրենց գագաթնակէտին հասան Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, երբ ի դէմս խորհրդապային վարչակարգի, առաւել քան երբեք սրուեց Ռուսաստանի նկատմամբ կողմնորոշման ու վերաբերմունքի հարցը:

Համագումարը Հայկական հարցին անդրադարձաւ հետեւեալ ձեւակերպմամբ. «Մեր ժողովուրդը միայն ցանկութիւն կարող է յայտնել, որ Ռուսաստանը իւր դաշնակիցների հետ միասին պիտի ազատ մեր կոտորուող ժողովրդին տանեական լծից եւ տանեակահայերի բախուի որաշումը բողնելու է նոցա, իսկ ոռուսակայերի կողմից պէտք է լինի միայն ամէն տեսակի աջակցութիւն»²⁵: Ինչպէս տեսնում ենք, հայ եկեղեցին առաջնորդուում էր ազգերի ինքնորոշման սկզբունքով եւ խուսափում էր արմատական ու կտրուկ պահանջներին: Ինչ վերաբերում էր տարածքային ինքնավարութեան խնդիրն, ապա այստեղ եւս համագումարը որոշեց սպասել ոռուսահայ ազգային ժողովին:

Ինչ վերաբերում է վերը քննարկուող հարցին, ապա այն առաւելագոյն 27 ձայնով ընդունեց հետեւեալ բանաձեւում. «Համագումարը ցանկալի է համարում, որ առաջիկայում գումարուելիք ազգային ժողովին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, «որպէս ազգի գլուխ» ունենայ իր յատուկ ներկայացուցիչները: Միաժամանակ համագումարը որոշում է, որ իւրաքանչիւր անդամ լայն մասնակցութիւն ունենայ ժողովի ընտրութիւններին, ամէն աջակցութիւն ցոյց տայ նրա յաջողութեանը, հանդէս գալով որպէս հայ ազգի անդամ»²⁶: Համագումարը որոշեց նաեւ մասնակցել Ռուսաստանի ապագայ Սահմանադիր ժողովին:

²⁵Տե՛ս Բանաձեւեր..., էջ 24:

²⁶Տե՛ս Բանաձեւեր..., էջ 23:

դովին՝ «մեր ճգնաւմներն ու մեր ազգային տեսակէտը պաշտպանելու համար», բայց միաժամանակ, ենելով համընդհանուր սպասողական մթնոլորտից, նշեց, որ «հայ հոգեւորականութիւնը Սահմանադիր ժողովի հանդէպ իր վճռական դիրքը պարզելու համար կը սպասի մինչեւ գումարուելիք ոռուահայ ազգային համաժողովը կ'որոշի իր դիրքը Սահմանադիր ժողովի նկատմամբ»²⁷:

Հարկ է անդրադառնալ օրակարգում եղած «կոչ՝ ուղղուած կովկասի ազգաբնակչութեանը» հարցի հանդէպ համագումարի վերաբերմունքին, այն է՝ «համագումարը նկատի ունենալով, որ նման կոչերը շատ սովորական երեւոյթներ են եւ որեւէ նշանակութիւն չունեն, ձայների բացարձակ մեծամասնութեամբ մերժեց իրատարակել պյան համագումարի անունից»²⁸: Այս սեղմ, բայց խորիմաստ որոշումը, ի հարկէ, առանձին լուրջ քննարկման նիւթ է, այստեղ նշենք միայն, ուր Գէ՛նորդ Ե. Սուրենիանց Ամենայն հայոց կաթողիկոսը, Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, նրա ղեկավար հոգեւոր այլերը այս բարդ հարցում, թերեւս իւր անկեղծութեան մէջ, առաւել հեռատես ու իրական ուղի էին ընտրում, քան ազգամիջեան ընդհարումներում բազմիցս թրծուած մեր ազգային կուսակցութիւնները:

Ցունիաի 18-ին (6-րդ նիստ) համագումարի խորհրդածութեան նիւթն «Հայաստանեայց եկեղեցու եւ եկեղեցականութեան վիճակի բարեփոխութեան եւ կանոնական ինսդիրներ» գեկուցումը, ինչպէս նաեւ «Հայ ազգային-եկեղեցական կեանքում ներկայումս եկեղեցին իրեւե գործօն» հարցադրման շուրջ առաջացած երկու հոսանքների քննարկումը: Մէկը շեշտում էր եկեղեցու միայն կրօնաբարոյական դերը՝ կամայ թէ ակամայ մերժելով վերջինիս պատմական, քաղաքական ու մշակութային նշանակութիւնը, իսկ միւսը պնդում էր եկեղեցու խաղացած պատմական դերը շարունակելու խնդիրը: Հետաքրքիր է, որ համապատասխան բաժանմունքում ընդհնչնը 7 ձայն ստացած պատմականութեան վերաբերեալ որոշումը յաղթեց համագումարում ստանալով 34 ձայն:

²⁷ Տե՛ս Բանաձեւեր..., էջ 23:

²⁸ Տե՛ս Բանաձեւեր..., էջ 24:

Նշում է, որ «Եկեղեցին նպաստել է հայկական մշակոյթի զարգացման գործին, զարկ է տուել գրին, գրականութեանը, վառ է պահել կրօնական զգացմունքը, պաշտպանել է հայ ժողովրդի ամբողջականութիւնը, այսուհետեւ նա եւս պէտք է շարունակի իր պատմական դերը այն չափով, որքանով կը հարկադրեն ապագայ հաղաքական հանգամանքները հայ ազգի ազտագրութեան վերաբերմամբ»²⁹:

Յաջորդ կարեւորագոյն խնդիրը «դպրոցական-կալուածականն» էր (Յունիսի 17, նիստ 5-րդ), որը մի գուցէ Հայկական հարցից յետոյ ԺԹ-ի դարերի հայ իրականութեանը յուզող կենտրոնական խնդիրն էր, որպէս ազգային գոյութեան առանցք:

Այստեղ եւս յեղափոխութիւնն էր խաղացել որոշիչ դերը: Բաժանմունքի եզրակացութեան մէջ, որը եւ ընդունուեց որպէս բանաձեւ նշում էր. «Մինչեւ այժմ հայոց դպրոցները եղել են ժողովրդինը, բայց հանգամանքների բեկադրմամբ դպրոցների դեկը յանձնուած էր հոգեւոր իշխանութեանը, այժմ նոր, ազատ կարգերի շնորհիւ ժողովուրդը (համայնքը) լիակատար տէր ու տնօրէն է հայ դպրոցին. Պետական դպրոցները (նկատի ունի՝ ցարական-Վ.Մ.) ունեին հակազգային ուղղութիւն. Ա. Էջմիածնում գումարուած այս համագումարը սպասում է, որ Ռուսական Սահմանադրի ժողովը իրաւունք կը տայ հայ ազգին իր երեխաներին կրթել ազգային ոգով պետական դպրոցներում՝ դարձնելով այդ դպրոցներում կրօնն ու հայոց լեզուն պարտադիր»³⁰: Եկեղեցական կալուածքների հարցում եզրակացութիւնն այն էր, որ այսուհետեւ եւս թէ եկեղեցական եւ թէ վանքապատկան եկամուտները պէտք է գործադրուեն դպրոցական-ազգային-մշակութային նպատակների համար՝ փոփոխութիւն մտցնելով կառավարման ձեւերի մէջ: Նկատի էր առնուում բնակչութեան մասնակցութիւնը ընտրութիւններում³¹: Համագումարի կողմից քննարկուող հարցերի մի խումբ նուիրուած էր եկեղեցական ներքին խնդիրներին, ինչին մենք կ'անդրադառնանք համեմատաբար թուուցիկ կերպով: Նպատակայարմար ենք գտնում այս հարցերի մասնագիտական մեկնաբանութիւնը թողնել Հայաստանեայց առաքելա-

29 Տե՛ս Բանաձեւեր..., էջ 15:

30 Տե՛ս Բանաձեւեր..., էջ 12:

31 Տե՛ս Բանաձեւեր..., էջ 12:

կան եկեղեցու պատմութեան մասնագէտներին եւ աստուածաբաններին:

Հայ եկեղեցու ապագայ վարչական կառուցուածքը ունենալու էր հետեւեալ պատկերը ա) ծխական դպրոց եւ ծխական հոգաբարձութիւն, բ) թեմական վիճակային խորհուրդներ, գ) կենտրոնական խորհուրդ Ս. էջմիածնում (Վարելու էր ուսումնարանական գործերը), դ) Համազգային խորհուրդ Ս. էջմիածնում, ե) եկեղեցու պետը եւ ներկայացուցիչը Ամենայն Հայոց Հայրապետն է, որն ընտրում է Համազգային եկեղեցական ժողովի կողմից Ս. էջմիածնում: Այդ ժողովն էլ միակ կանոնադիր մարմին էր ճանաչում, որը գումարում է Ամենայն Հայոց Հայրապետը³²:

Կուսակրօն հոգեւորականութեան վերականգնման ու վանքերի վերածնութեան խնդրի լուծումը որոշւում է թողնել իրեն՝ կուսակրօնութեանը³³: Նշենք միայն, որ բարձրացւում էր նաեւ կուսակրօնութեան վերացման հարցը: Ուշադրութեան էր արժանանում եկեղեցու ժամակարգութեան եւ ծխակատարութեան մէջ եղած «կրկնութիւնների ու աւելորդաբանութիւնների» վերացման խնդրը, առաջարկում էր, որպէսզի երաժշտութիւնը ցանկալի տեղ ունենայ քարոզի կողքին³⁴:

Հայ հոգեւորականութեան մտաւոր մակարդակը բարձրացնելու համար առաջարկում էր նշանակել կրթական ցենզ՝ հաշուի առնելով առնուազն միջնակարգ դպրոցի աւարտականը, դրան կցելով եկեղեցական-կրօնական դասընթացներ: Գիւղական քահանաների համար աւելացնում էին գործնական առարկաների լրացուցիչ դասընթացներ³⁵:

Հոգեւորականութեանը թոյլատրում էին ճ-րդ կարգի աղդակցական ամուսնութիւնը, յաճախում կրթիչ վայրեր (թատրոն, դասախոսութիւնների), սեմակրութիւնը քահանայի համար ճանաչում էր պարտադիր, վերացւում էր ամուսնացողների միջեւ տարիքի տարբերութեան սահմանափակումը, ընդլայնում էր պա-

³² Տե՛ս Բանաձեւեր..., էջ 26:

³³ Տե՛ս Բանաձեւեր..., էջ 17-19:

³⁴ Տե՛ս Բանաձեւեր..., էջ 16-19:

³⁵ Տե՛ս Բանաձեւեր..., էջ 15-16:

կի խորհրդի կատարման օրերը՝ արգելելով միայն Ս. Շննդեան պասին եւ մեծ պասի առաջին ու վերջին շաբաթներին:

Եւ վերջապէս, համագումարի տնտեսական բաժանմունքը որոշեց քահանայական հասոյթների գործող ձեւը փոխարինել կանոնաւոր աշխատավարձով:

Յունիսի 23-ին էջմիածնի եկեղեցական համագումարը աւարտեց իր աշխատանքները, ժողովի ատենապետ Տ. Գէորգ եպիսկոպոսը Դիւանի կողմից չնորհակալութիւն յայտնեց ցուցաբերուած պատշաճութեան չափի ու լրջութեան համար:

Հայ հոգեւորականութեան այդ գագաթնաժողովը իր ուժեղի ներածի չափով, քաղաքական անցումային, բարդ իրավիճակում բարձրացնում էր համահայկական հիմնահարցեր, փորձում էր գըտնել լուծման ուղիներ: Համագումարը անփոխարինելի ծառայութիւն մատուցեց հոգեւոր դասին՝ գաղափարական հողի վրայ նըրանց շիման, տեսանկիւնից փոխզիջումների չգնալու, որով եւ վերացան քազմաթիւ թիւրիմացութիւններ, պարզուեցին կարեւոր իմնդիրներ:

Վատահ ենք, որ 1917թ. համագումարը իր գործնական ու պատմական նշանակութիւնն է ունեցել մեր եկեղեցու ունեցած փառահեղ ուղու մէջ, ինչու չէ նաեւ նկատելի ազդեցութիւն՝ հասակական-քաղաքական բարդ իրադարձութիւնների վրայ:

The Etchmiadzin Ecclesiastical Conference: The Russian-Armenian Clerical Conference of June 1917 (summary)

Vahan Melikian

Following the Russian February Revolution in 1917 and the collapse of Czarism, between March and October of that year Russian-Armenians enjoyed a period of peaceful existence and development in public and civil life.

The Armenian Ecclesiastical Conference of Etchmiadzin held in 1917 was remarkable by its originality. In the history of the Holy See of the Armenian Apostolic Church, this was the first time when an ecclesiastical conference was called as a result of political upheavals, in this case the fall of monarchy. Armenians had lost statehood long ago and did not enjoy comprehensive civil liberties. However, at that historical moment, the Armenian Church rose to call upon the nation to unify and act wisely and rationally.

The majority of the Armenian people then consisted of immigrants and most Armenian provinces were in a state of war within the three neighboring countries. All this was occurring at a critical junction in world history when countries like Russia and Turkey were being redefined.

Following the revolution and the relative freedom that ensued, the Armenian clergy was faced with serious challenges. Aside from mention internal problems, it had to address extreme nation-wide crisis. This is when the ecclesiastical conference was held in Etchmiadzin on June 22-23, 1917, with the purpose of finding solutions to national issues.

The conference became mostly significant for its decisions aimed at achieving national goals, as well as from the perspective of mutual concessions and agreements concluded. Thus, it was able to convey certain clarity to the issues at hand and devise a unified action plan.